

ՇԱՐԺՈՒՄԱՅԻՆ ԼԵԶՎԻ ԱՌԱՆՉՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԵՐԻ ՈՒ ԻՐԱՆՑԻՆԵՐԻ ՄՈՏ

Ոչ խոսքային հաղորդակցման ամենազանգվածային ու տարածված համակարգերից է շարժումային (շարժումների, շարժությների) լեզուն, որը մարդկությանն ուղեկցել է բոլոր ժամանակաշրջաններում, որոշակի դերով հանդես եկել "Homo Habilis"-ից էլ առաջ, գործառական տեսակետից անցել է որոշակի էվոլյուցիոն շրջան, փոփոխվել, հասել է մեզ և այսօր էլ ծառայում է որպես հաղորդակցման միջոց¹: Այլ կերպ ասած՝ շարժությների լեզուն հողաբախշ լեզվին չտիրապետող նախամարդուց մեզ ժառանգված լեզվի շարունակությունն է²: Այն հաճախ ավելի խոսուն, բովանդակալից և ընդհանրացնող է, քան երբ մենք դա արտահայտում ենք բառերով, բացատրություններով: Այդ յուրօրինակ լեզուն առնվազն երկու կարևոր գործառույթ ունի. դրա միջոցով մենք շփվում, հաղորդակցվում ենք, հասկանում իրար, այնուհետև արտահայտում ենք մեր վերաբերմունքը, հավանություն տալիս, քաջալերում կամ քննադատում գրուցակցի արարքները, կարգավորում կամ կանխարգելում նրա գործունեությունը³: Լեզվաբանության մեջ ընդունված չեզոք նախադասությունը նույնպես շարժումների լեզվի տարատեսակներից է⁴: Երբ մարդն իր ձեռքն ուղղում է դեպի ծանոթը և մատը շարժում, նա, դիմելով չեզոք նախադասության հնարքներին, ցանկանում է վերջինիս իր մոտ հրավիրել:

Շարժումների լեզվի գլխավոր գործառույթներից է նաև զգացմունքների արտահայտումը⁵:

Ընդ որում, տարածվածության և կիրառելիության տեսակետից, հիմնականում տարբերակվում են շարժությների երկու կարգ. դրանց մի մասը հատուկ է միայն մեկ, երբեմն նաև ազգակից ու մերձակա մի քանի ժողովուրդների (ազգագրական կամ ազգային շարժությներ), իսկ մյուսը՝ աշխարհի տարբեր կողմերում բնակվող ժողովուրդների (միջազգային շարժությներ)⁶: Միևնույն իմաստն արտահայտելու համար այս կամ այն ժողովուրդը կարող է գործադրել մարմնի միանգամայն տարբեր մասեր և կիրառել շարժալեզվական տարբեր միջոցներ:

Հայերն ու պարսիկները, լինելով միևնույն հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին անդամը հանդիսացող հայերեն ու պարսկերեն լեզուների կրողները և լինելով ազգակից ու դրացի ժողովուրդներ, միմյանց փոխ են տվել

ոչ միայն բառեր ու արտահայտություններ, այլև գտնվել են հաղորդակցման այլ միջոցների՝ շարժույթների փոխադրեցության ոլորտում:

Անշուշտ, նման կարգի արտահայտչամիջոցների ընդհանրությունը չպետք է պատճառ դառնա, որ հայը պարսկերենով, կամ իրանցին հայերենով հաղորդակցվելիս կամ գեղարվեստական թարգմանություններ կատարելիս կիրառի միայն սեփական լեզվին հատուկ արտահայտչամիջոցներ, որը նույնիսկ կարող է թյուրըմբռնման տեղիք տալ:

Բնականաբար, ազգային շարժույթների յուրօրինակությունները, այլ ժողովուրդներին դրանց անծանոթ լինելը, գրական թարգմանությունների ժամանակ պահանջում են առանձնակի ուշադրություն՝ ոչ միայն բնագիր լեզվի, այլև այդ լեզվով խոսող ժողովրդի շարժասության խոր իմացություն⁷:

Հայերի ու իրանցիների կողմից բանավոր խոսքում զուգահեռ կիրառվող շարժումները շատ հաճախ ընդհանուր են և դա հասկանալի է՝ նկատի ունենալով լեզվամտածողության ընդհանրության համար գոյություն ունեցող տարբեր գործոնները: Դրա համար նախ հիմք է ծառայել այն, որ հայերն ու իրանցիները դարեր շարունակ ապրել են միևնույն աշխարհագրական տարածքում, միատեսակ բնակլիմայական պայմաններում: Մրանք ունեցել են ընդհանուր խնդիրներ ու թշնամիներ, ի վերջո բախվել են միատեսակ դժվարությունների, դիմակայել համանման արհավիրքների, ուստիև ակնհայտորեն ունեն բազմաթիվ ընդհանրություններ ոչ միայն բանավոր հաղորդակցման ամենազանգվածային ու տարածված համակարգը հանդիսացող շարժումների լեզվում, այլև լեզվամտածողության ոլորտում, որոնք իրենց արտահատությունն են գտնում թե՛ բառարմատներում ու կայուն բառակապակցություններում և թե՛ դարձվածքներում ու թևավոր խոսքերում՝ ժողովրդական ասացվածքներում:

Անդրադառնալով շարժումային լեզվին՝ նշենք, որ օրինակ զարմանքն արտահայտելիս, հայերն ու իրացիները հոնքերը վերև են բարձրացնում կամ աչքերը լայն բացում, գայրույթի դեպքում՝ շրթունքներն իրար սեղմում, գլխի թեքումով ցուցադրում են իրենց հալածված լինելը, դրական պատասխան տալու համար գլուխը շարժում դեպի ներքև: Թե՛ հայերի և թե՛ իրանցիների մոտ գլուխը բարձր պահելն ինքնավստահության նշան է: Աչքով չտալու համար թե՛ հայերը և թե՛ իրանցիները մատով հարվածում են փայտին: Բարի մաղթանքի դեպքում իրանցին հայի նման ձեռքը դնում է դիմացինի գլխին (տարոսը քեզ): Ձարմանքի ժամանակ և՛ հայերը և՛ իրանցիները մի ձեռքի մատներով հարվածում են մյուս ձեռքին: Հաշվարկ կատարելիս երկու ժողովուրդների մոտ էլ ընդունված է բաց վիճակում եղած մատները հերթականությամբ փակել և այլն: Սակայն երկու ժողովուրդների շարժումային լեզվում կան նաև տարբերություն-

ներ, որը նույնպես բնական կարելի է համարել: Եթե հայերի և այլ ժողովուրդների մոտ ցգված բուժ մատը նշանակում է հաջողություն և դրական վիճակ, ապա իրանցիների մոտ այդ շարժումը հակառակ իմաստն է արտահայտում:

Հայերենն ունի շարժումային լեզվի բավականին ծավալուն բառարան⁸, որն իր կառուցվածքով և բովանդակությամբ չի գիշում անգլիացիների, իտալացիների, լատինամերիկյան երկրների ժողովուրդների, հնդիկների, ռուսների, չինացիների և այլ ազգության ներկայացուցիչների կազմած նմանօրինակ բառարաններին: Սակայն պարսկերենով կազմված նման բառարան գոյություն դեռևս չունի: Այդ բացը մասամբ լրացրել է իրանցի լեզվաբան Մանսուր Սերվաթը իր հեղինակած «Ֆարհանգ-է բենայաթ»⁹ դարձվածաբանական բառարանի միջոցով: Դրանում բազմաթիվ են այն բառահոգվածները, որոնք հանդես են գալիս որպես շարժումային լեզվի բառարանի բառային միավորներ: Ուշագրավ է այն փաստը, որ այդ բառարանում շարժումային լեզվին վերաբերող արտահայտությունները հիմնականում համապատասխանում են հայոց շարժումային լեզվի առանձնահատկություններին: Օրինակ՝ دست بر کمر مالت (ծեռը գոտկատեղին մնալ)¹⁰ արտահայտությունը, ինչպես նշված է խնդրո առարկա բառարանում, նշանակում է անգործության մատնվել: Այդպիսի կեցվածքով հայ մարդը նույնպես ներկայացնում է «գործն ավարտին հասցրած, անգործության մատնված» մարդու իրավիճակ: پا به پا کردن (կանգնած վիճակում ոտքերը դնել-վերցնել, դեղևել)¹¹ ըստ պարսկերեն դարձվածաբանական բառարանի՝ ինչպես իրանցիների, այնպես էլ հայոց մոտ նշանակում է հապաղել, տատանվել: Ընդունել, համաձայնվել նշանակությամբ պարսկերեն دست بر چشم نهادن (ծեռը դնել աչքին)¹² արտահայտությունը համապատասխանում է հայերենին և այլն:

Ստորև ներկայացված բառացանկը, որը կազմված է ըստ վերը նշված բառարանի, վկայում է հայերենի ու պարսկերենի նմանօրինակ ընդհանրությունների մասին.

Մատը շուրթերին տանել- انگشت بر لب بردن, Պարտադրել մեկին խոսքով հանդես գալ- کتبه از به حرف آوردن کسی را-

Մատը բարձրացնել- انگشت بته کردن, Խոսելու թույլտվություն վերցնել- کتبه از کتب اجازه برای سخن گفتن

Մատը բարձրացնել- انگشت بر آوردن, Հաստատել, խոստովանել- کتبه از تصدیق کردن و اذعان نمودن

Մատն աչքին դնել- انگشت بر چشم نهادن, Ընդունել, հաստատ համոզված լինել, անտեսել- کتبه از قبول کردن-

Մատը բերանը տանել- انگشت بر دهان گذاشتن, Ափսոսանք արտահայտել, Գարմանալ, լռելու կոչ անել- حسرت، افسوس، تعجب، تیر، اشاره به خاموشی-

Մատը կծել- անگشت به دندان گزیدن, Զարմանք և ափսոսանք արտահայտել- ڪٽيه از پشيمان
تعجب، تحير، افسوس برکاري

Ափսոսանքով մատը կծել- անگشت حسرت به دندان گزیدن, Մատիկ զղջալ- ڪٽيه از پشيمان
سخت

Մատը բերանի մեջ մնալ- անگشت در دهان ماندن, Զարմանք արտահայտել- ڪٽيه از
متعجب و متحير ماندن

Մատը բռնել- անگشت گرفتن, Հաշվել- حساب کردن

Կանգնած վիճակում ոտքերը դնել վերցնել- Կանգնած վիճակում ոտքերը դնել վերցնել-
مردد بودن / ادهخدا/

Մեկի ձեռքին հարվածել- Կես ۱ یا کسی فرو کوفتن, Մեծամարտի պատրաստակա-
մուրթուն հայտնել- ۱ آماده هماردی و برابری یا کسی

Ձեռքը բարձրացնել- Կես ۱ یا کسی بالا کردن, Մի գործ սկսելու նախաձեռնություն հայտնել-
ڪٽيه از بیش قدم شدن برای کاری

Ձեռքը երկինք մեկնել- دست بر آسمان داشتن, Աղոթելով օգնություն հայցել- ڪٽيه از
شفاعت کردن

Ձեռքը դնել աչքին- دست بر چشم نهادن, Ընդունել, համաձայնվել- ڪٽيه از قبول کردن

Ձեռքով երեսը ծածկել- دست بر رو گرفتن, Ամաչել- ڪٽيه از شرم و حیا بود

Ձեռքը ձեռքի վրա դնել - دست بر روی دست نهادن, Հապաղել, անգործության
մատնվել- معطل و بی کار بودن

Ձեռքդ իմ գլխին- دست بر سر من- Թող ինձ էլ բաժին հասնի (տարոսն ինձ)-

ڪٽيه از آنچه ترا میسر شد، مرا هم نصیب باد

Ձեռքը մեկի գլխին ու երեսին քաշել- دست بر کسی کشیدن, Կես ۱ یا کسی
از نوازش کردن کسی

Ձեռքը դնել կոշիկի վրա- دست بر کفش نهادن, Հարգել մեկին- ڪٽيه از احترام کردن است

Ձեռքը գոտկատեղին մնալ- دست بر کمر ماندن, Անգործության մատնվել- ڪٽيه از
معطل و بی کار ماندن

Ձեռքը մեկնել մեկի կոկորդին- دست بر گلو آوردن, Սպառնալ- ڪٽيه از تهدید کردن

Ձեռքերն իրար շփել- دست بر هم مالیدن, Ինչ-որ գործի համար պատրաստվել- ڪٽيه از
آماده شدن برای کاری

Ձեռքերն իրար խփել- دست بر هم زدن, Ուրախանալ- ڪٽيه از ابراز شادی کردن

Մեկի վրա ձեռք բարձրացնել - دست بلند کردن بر روی کسی - ڪٽيه از تهدید کردن

Ձեռքը մեկնել մեկի փեշին- دست به دامن کسی شدن, Ապավինել մեկին, օգնություն
հայցել- ڪٽيه از توسل به کسی برای یاری جستن

Ձեռքը ձեռքին տանել- دست به دست بردن, Շտապողականություն ցուցաբերել- ڪٽيه از
عجله و شتاب

Զեռքերը չփել- دست به دست می‌مالند, Դապաղել, տարակուսել, ուշանալ- Կنايه از تامل و تاخير در کار

Զեռքը սրտին- دست به دل, Պատրաստ ծառայություն մատուցելու- Կنايه از آمادگی برای خدمت

Զեռքն ատամին- دست به دندان, Զարմացած- Կنايه از تعجب و حیر

Զեռքը կծել- دست به دندان گرفتن, Ափսոսանք հայտնել- Կنايه از حسرت و ندامت و تأسف خوردن

Զեռքով մորուքը բռնել- دست به ریش گرفتن, Խնդրանքով դիմել- Կنايه از ھاری چستن

Զեռքը ծնոտի տակ պահել- دست به زیر زنهان داشتن, Աղերսանք- Կنايه از التماس

Զեռքը ծնոտին սյուն դարձնել- دست به زیر زنه ستون کردن, Մտահոգ լինել- متفكر و - تنوھنگن بودن

Զեռքը գոտկատեղին պահել- دست به ڪمر زدن, Իշխողի կեցվածք ընդունել- حالت - آمری و سروری به خود گرفتن

Զեռքը օծիքին տանել- دست به ڤچه شدن, Գժտվել- Կنايه از درگیری و گلاویز شدن

Զեռքն առաջ բերել- دست پیش آوردن, Մուրալ- Կنايه از دریوزه و گدایی کردن

Զեռքը մեկին մեկնել- دست پیش ڪمي دراز کردن, Մուրալ- Կنايه از دریوزه و گدایی کردن, Ափսոսանքով ծեռքն ականջի տակ պահել- دست حسرت بر بنا گوش بودن, Ափսոսալ- Կنايه از افسوس خوردن است

Զեռքը թևի տակ լինել- دست در بغل بودن, Սպասողական վիճակում լինել- Կنايه از معطل و بی کار بودن

Զեռքը բերանի վրա պահել- دست در ڤهن گرفتن, Թույլ չտալ խոսել- Կنايه از منع کردن از گفتن

Զեռքն ազդրի տակ պահել- دست در زیر ران گذاشتن, Խոստումը կատարելու պարտավորություն- Կنايه از وفاداری و امانت در سوگند

Մերժելու նպատակով ծեռքը մեկի կրծքին մեկնել- دست رد بر سینه ڪسي نهادن, Խոսակցի աղերսանքը մերժել, չընդունել- خواهش و التماس مخاطب را نپذیرفتن

Զեռք թափահարել- دست فشاندن, Անտարբերություն ցուցաբերել- بی اعتنایی کردن

Զեռքը շերտի դարձնել- دست کفچه کردن, Մուրալ- Կنايه از در یوزه و گدایی

Բերանը բացել- Կنايه از سراسیمه بودن, Զարմացած լինել- حیران و شامه

Բերանը փակել- Կنايه از به سکوت داشتن ڪسي را, Լուրջան կոչ անել- Դեհան بستن

Բերանը բաց մնալ- Կنايه از ڤهن ڪسي باز ڤماندن, Սաստիկ զարմացած լինել- سخت متحیر و متعجب شدن

Ատամը սեղմել- Կنايه از مقاومت کردن, Դիմադրություն ցուցաբերել- Դندان فشردن, Տասը մատները բերանին պահել- ده انگشت بر ڤهن گرفتن, Աղերսանք- Կنايه از تضرع و زاری

Մեկի մոտ ծնկի գալ- Կنايه از مطلوب شدن, Պարտված լինել- Դալո Զدن در برابر ڪسي, Գլուխը ծնկներից վեր բարձրացնել- سر از Դալو بر گرفتن, Դադարել զգաշանալուց-

کتابه از بلند کردن سر از مراقبه

գլուխն օծիքից հանել-سر از گریبان بر آوردن

Մատի ծայրը կծել-سر انگشت به دندان گزیدن

գլուխը վեր բարձրացնել-سر بر تافتن

գլուխը ծնկներին դրած նստել-سر بر زانو نشستن

գլուխը պտտեցնել-سر پیچیدن

Մեկի մոտ գլուխը կախել-سر پیش کسی انداختن

کتابه از مغلوب و عاجز شدن

գլուխը թափահարել-سر جنبیدن

1 حيله کردن 2 تعال-سر خاریدن

գլուխը քորել-1. Խորամանկել, 2. Հապաղել, 3. Թծնել-شکم خاري

Մերժելու համար պատճառաբանություններ գտնել-کتابه از بهانه کردن

2 եղբի ափերն իրար շփել-کتابه از بهانه کردن

վիզը վեր բարձրացնել-گردن افراختن

վիզը բարձրացնել-گردن افراشتن

վիզը կախել-گردن افکندن

վիզը ցած գցել-گردن انداختن

վիզը քորել-گردن خاریدن

վիզը ծռել-گردن خم کردن

վիզը մեկնել-گردن فرازي کردن

فروتنی، التماس

کتابه از بهانه کردن

Օգտագործված գրականության ցանկ.

¹ Ե. Գևորգյան, Շարժումների լեզուն, Եր., 1988, էջ 10:

² http://www.sepehr32.blogfa.com/post-42.aspx /27 دی 1384. حرف زدن بدون دخالت زبان ؟ مگه میشه.

³ Ա.Ջ.Արզումանյան, Արմատուն, Համր լեզու, ինչպես կարելի է այն բարգձմանել.

25.01.2007, http://www.armtown.com/forum/index.php?showtopic=17

⁴ Հ.Անադյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Եր., 2005, էջ 198:

⁵ ميمو وزير نيا، زبان شناخت، نشر قطره، 1379، صفحه 270

⁶ Ե. Գևորգյան, Շարժումների լեզուն, Եր., 1988, էջ 51:

⁷ Նույն տեղում, էջ 57:

⁸ Ե. Գևորգյան, Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարան, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան 2003:

دکتر منصور ثروت، فرهنگ کتابیات، انتشارات سخن، چاپ سوم سال 1379 با بازنگری و افزایش

¹¹ Ե. Գևորգյան, Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարան, Երևանի համալսարանի հրատ., Եր., 2003, էջ 137:

¹² Նույն տեղում, էջ 310:

¹³ Նույն տեղում, էջ 54: